ԲԻԹԼԻՍԻ 1914 թ. ՔՐԴԱԿԱՆ ԱՊԱՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ՄԱՄՈՒԼԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

ՋԱԼԻԼ ՋԱԼԻԼ

Երիտթուրքերի քաղաքականությունը Օսմանյան կայսրության մեջ մտնող ոչ թուրք ժողովուրդների նկատմամբ եղել է ընդգծված շովինիստական և հետապնդել է ասիմիլատորական ու ջարդարարական նպատակներ։ Ի տարբերություն նախորդ սուլթանական ռեժիմների, երիտթուրքերը ավելի վճռական գրտնվեցին երկրում ազգային հարցի լուծման, դրա իրականացման առավել բարբարոս, ննդգավոր միջոցների ընտրության մեջ։ Լինելով թուրքական ազգային բուրժուազիայի շահերի անմիջական արտահայտողներն ու իրականացնողները, երիտթուրքերը չերկնչեցին արյան ծովի մեջ խեղդել ամեն մի ազգային շարժում, այլազգիների ազգային ինքնագիտակցման դրսևորման ամեն մի փորձ։ Իհարկե, սիալ կլիներ կարծել, թե երիտթուրքերը իրենց քաղաքականության գինապահոցից հանել էին մուսուլմանությունը քրիստոնեությանը հակադրելու արդեն բազմիցս փորձված միջոցը, մի բան, որ տարիներ շարունակ արդյունավետ էր եղել սուլթանական բռնապետական ռեժիմի ամրապնդման, հպատակ ժողովուրդներին միմյանց հետ դժտելու գործում։

Երիտթուրքերը 1908 թ. իշխանության գլուխ անցան երկրում ազգային հարցի լուծման, բոլոր ժողովուրդների համար զարգացման հավասար և նպաստավոր պայմաններ ստեղծելու խոստումներով։ Սակայն շատ շուտով այս բոլորը նրանց կողմից «մոռացության» մատնվեց, դրժվեց, և իր ողջ մերկությամբ դրսևորվեց երիտթուրքերի մոլի շովինիզմը։ Թերևս նրանց քաղաքականության մեջ առավել երկարակյացը կայսրության «արևելյան վիլայեթների բարենորոգումների» խնդիրը մնաց, քանի որ այդ հարցին «զորավիգ» էին եվրոպական մի շարք երկրներ։

Հայկական հարցի լուծման կարևոր պայմաններից մեկը բարենորոգումներն էին, այդ իսկ պատճառով դրանք գտնվում էին հայ հասարակայնության, նրա քաղաքական ուժերի ուշադրության կենտրոնում։ Խնդրո առարկայի շուրջն էր երկար ժամանակ ծավալվում էին երիտթուրքերի մթին և ննդգավոր ծրագրերը։ Այստեղ որոշակի դեր էր հատկացվում հայկական հողերում բնակություն հաստատած քրդական ցեղերին, հայկական հողերը բռնագրաված այն բուրդ ֆեոդալական ու կրոնական վերնախավերին, որոնք պետք է գործիք ծառայեին վիժեցնելու բարենորոգումների իրականացումը։ Երիտթուրքերի այս միտումը քաջ ծանոթ էր հայ իրականությանը։ Այդ իսկ պատճառով հայ-քրդական փոխհարաբերությունների հարցը, երիտթուրքերի կողմից քրդերի մեջ տարվող հակահայկական քաղաքականությունը լայն լուսաբանություն էր գրտնում հայկական մամուլի էջերում։ Քրդական իրականության մեջ տեղի ունեցող ամեն մի աննշան իրադարձություն անգամ լուսաբանվում էր հայկական լրագրերի էջերում, տրվում էր դրանց մեկնաբանությունն ու գնահատականը։ Իսկ այդ իրադարձությունները ծավալվում էին երկու հիմնական ուղղությամբ։

Մի կողմից առկա էին քրդական հասարակական ու քաղաքական կյանքում տեղ գտած նոր, առաջավոր երևույթներ, որոնք արդյունք էին նախ և առաջ ազգային ինքնագիտակցության զարթոնքի և կապվում էին քրդական ազատագրական շարժման մեջ նոր ուժերի հանդես գալու հետ։ Բավական է ընդգծել, որ 1908 թ. Ստամբուլում ստեղծվել էին հասարակական ու մշակութային մի քանի միություններ, ինչպես՝ «Քուրդ թաավուն վա թարաքքի ջամիաթի»-ն («Քրդական փոխօգնության և առաջադիմության միությունը»), «Քուրդ նեշր մաարիֆին» («Քրդական կրթության տարածման»), «Հիվա» («Հույս») միություն-

ները։ Մայրաքաղաքի քուրդ մտավորականության ու ուսանողության ջանքերով հրատարակվում էին քրդական պարբերականներ՝ «Քուրդ», «Քուրդստան», «Ռոժա քուրդ» և այլն։ Մյուս կողմից, Քուրդստանում և Արևմտյան Հայաստանում, հակաթուրքական տրամադրությունների կողքին, շարունակում էին ակտիվորեն գործել քուրդ ֆեոդալներն ու շեյխերը, այն ուժերը, որոնք՝ հովանավորվելով թուրքական իշխանությունների կողմից, լուրջ ուժ էին ներկայացնում իրենցից, նախ՝ բացասաբար ազդելով քրդական հասարակական կյանքի առաջընթացի վրա և ապա՝ շարունակելով մնալ հակադիր ուժ հայ ազատագրական պայքարի ճանապարհին։

Քրդական շարժման մեջ գոյություն ունեցող այս երկու իրարամերժ ուժերի առկայության պայմաններում 1914 թ. Բիթլիսի շրջանում բռնկվեց քրդական հակաթուրքական մի ապստամբություն, որը կարճ ժամանակաընթացքում, կառավարության կողմից ձեռք առնված կտրուկ և վճռական միջոցառումների օգնությամբ խեղդվեց արյան մեջ։

Բիթլիսի ապստամբությունը իր բոլոր մանրամասնություններով, հաճախ և իրարամերժ գնահատականներով ու մեկնաբանություններով լայնորեն արձագանք գտավ եվրոպական, ռուսական և հատկապես հայկական մամուլի էջերում՝ առիթ տալով գիտության մեջ այդ ապստամբության գնահատականի շուրջը տարբեր տեսակետների հանդես գալուն։

Բիթլիսի ապստամբությունը սկսվեց, թվում էր թե մի չնչին առիթով. Բիթլիսի վալին, որպեսզի ամրապնդի իր արդեն իսկ թուլացած հեղինակությունը, փորձեց ձերբակալել քրդերի մեջ հակաթուրքական ապստամբության ակտիվ կազմակերպիչներից մեկին՝ մոլլա Սելիմին, որը ժամանակակիցների վկայությամբ ժողովրդի մեջ մեծ հեղինակություն էր վայելում։ Ձերբակալելու անհաջող փորձը Բիթլիսի վիլայեթի քրդերի համար ապստամբության դրոշ բարձրացնելու ազդանշան դարձավ։ Կումաշ քրդական գյուղը, ուր ապստամբել էր մոլլա Սելիմը, վերածվեց բոլոր կողմերից եկող ապստամբների հավաքատեղիի։ Շուտով մի քանի հազարի հասնող ժողովրդական ամբոխը շարժվում է դեպի Բիթլիս։ Մարտի 20-ին քաղաքի համարյա բոլոր հիմնական հանգույցները արդեն գտնվում էին ապստամբների ձեռքում։ Սակայն զորանոցներում պաշարված զինվորները և առանձին պետական հիմնարկներում պաշարված թուրք ժանդարմներն ու ասկյարները գնդացրային կրակով կարողանում են կասեցնել ապստամբ ամբոխի հարձակումները։ Երկօրյա քաղաքային կռիվներում քայքայված ու ջարդված ամբոխը բոլոր կողմերից շտապ դեպի Բիթլիս շարժվող թուրքական զորաբաժինների ահից թողնում է քաղաքը և հեռանում։ Ապստամբության ղեկավարներից շատերը գերի են ընկնում թուրքերի ձեռքը, իսկ մոլլա Սելիմը իր մի քանի համախոհների հետ քաղաքական ապաստան է գտնում ռուսական հյուպատոսարանում։

Բիթլիսի իրադարձությունները մեծ անհանգստություն են պատճառում հայ ազգային, հասարակական ու քաղաքական շրջաններին։ Ամենայն հայոց կաթողիկոսը 1914 թ. մարտի 28-ին հեռագրով Պոլսի Զավեն պատրիարքից պահանջում է «շուտով մանրամասն զեկուցել Բիթլիսի, Մուշի հայերի վիճակի մասին, լրագիրներում հուզիչ լուրեր կան»։ Նույն բովանդակությամբ կաթողիկոսական դիվանից հեռագրեր են ուղարկվում Բիթլիսի ու Մուշի առաջնորդներին[1]։

Հայկական մամուլը Բիթլիսի իրադարձությունների առաջին իսկ օրվանից տագնապալի հոդվածներ է հրապարակում այն մասին, որ շարժումը ուղղված է հայ ազգաբնակչության դեմ, իբր սպասվում են ջարդեր և այլն։ «Մշակ» թերթը մարտի 25-ի համարում գրում է. «Շարժումը ուղղված է և հայերի դեմ», «Բիթլիսում հայ ազգաբնակչությունը ահաբեկված է։ Հայերը զինաթափ են արված» և այլն[2]։ Դեռ ավելին, նույն թերթի մեկ այլ հաղորդագրության մեջ կարդում ենք. «Թուրքական ժանդարմերիան անցել է ապստամբների կողմը և կո-

1 «Արարատ» (էջմիածին), 1914, № 4, էջ 325։

2 «Մշակ», 25 մարտի 1914։

տորում է հայերին Մուշի, Դիկի, Դիարբեքիրի, Վանի և Սամսունի շրջակայքում։ Բիթլիսի նահանգապետը հովանավորում է քրդերին»[3]։ Նույնը գրում էր և «Գործ» թերթը[4]։

Ինչո՞ւ քուրդ ապստամբների առաջին իսկ գործողությունները նման մեկնաբանություն էին ստանում հայկական մամուլի էջերում, ի՞նչ հիմքեր կային դրա համար։

Ապստամբությանը նախորդող տարիներին եվրոպական երկրների միջնորդությամբ Թուրքիայում լուրջ քննության հարց էր հայկական բարենորոգումների խնդիրը։ Այս հարցի շուրջը տեղի էին ունեցել երկարամյա քաղաքական խմորումներ, Թուրքիայի կողմից գործադրվել էին բազմապիսի ինտրիգներ և պրովոկացիաներ՝ դրա ընդունումը խափանելու համար։ Սակայն վերջապես, 1914 թ. փետրվարին կողմերին հաջողվում է համաձայնության գալ բարենորոգումներ անցկացնելու ուղղությամբ։ Սակայն հայկական մամուլը երկակի ընդունեց այս լուրը։ Եթե թերթերի մի մասը չէր թաքցնում իր ուրախությունը և հաղթանակի հրճվանքը, ապա մյուս մասը բացեիբաց դգուշացնում էր աղգաբնակչությանը հնարավոր ջարդերից ու կոտորածներից։ Շատերի կարծիքով այդ գործում որոշակի տեղ պիտի հատկացվեր քուրդ աշիրեթներին։ Այս կարծիքը հիմքից զուրկ չէր։ Մինչ համաձայնություն ստորագրելը թուրքական մամուլն իր էջերում հրապարակում էր թուրք լրագրողների հոդվածները, ուր կոկորդիլոսի արցունքներ էին թափվում քրդերի ճակատագրի համար, իբր բարենորոգումները ամբողջապես ուղղված են քրդերի դեմ և նպատակ ունեն բոլորին զուրս քշել այդ երկրից, նրանց զրկել կյանքի պայմաններից։ Այս առումով իշխանության ներկայացուցիչները գաղտնաբար ագիտացիա էին տանում քուրդ աշիրեթների մեջ։

Եվ ահա նոր կնքված բարենորոգումների համաձայնագրից չանցած մեկերկու ամիս, Բիթլիսում սկիզբ է առնում քրդական ապստամբությունը։ Ժամանակակիցներից շատերի կարծիքով այն արդյունք էր հայկական բարենորոգումներից դժգոհ աշիրեթների գործողության։ Այս տեսակետը պաշտպանողներ կան և մեր օրերում։ Սակայն հայկական, ռուսական և արտասահմանյան գրականության, մամուլի և արխիվային նյութի մանրակրկիտ ուսումնասիրությունը ժխտում է այս թյուր կարծիքը, և քանի որ քրդական շարժումները ծայր էին առել գեռ ավելի վաղ և շարունակվում էին Դերսիմում, Բարղանում և այլ վայրերում, ապա այս ապստամբությունները պետք է դիտել մեկ ամբողջականության մեջ, որպես միևնույն շղթայի տարբեր օղակներ և դրանց հիմքում տեսնել սոցիալական ու քաղաքական դրդապատճառներ։

Բիթլիսի ապստամբության նախօրյակին հայկական մամուլի էջերում հաղորդումներ էին տպագրվում այն մասին, որ թուրքական իշխանությունների բռնություններից և անհամեմատ մեծ չափերի հասնող հարստահարումներից քրդերի մեջ ծայր են առել հուզումներ։ Ժողովրդի համբերության բաժակը լցրեց հարկերի նոր, անհամեմատ մեծ չափերի սահմանումը։ Այդ առթիվ «Кавказ» թերթը գրում էր, որ Բալկանյան պատերազմի ավարտից հետո նախկին սիրաշահումների փոխարեն, Ստամբուլից ստացված ցուցումի համաձայն, քրդերի նկատմամբ սկսեցին գործադրել խոշոր և աննախընթաց միջոցառումներ»[5]։ Հատկապես ծանր էր քրդերի համար ոչխարի հարկը՝ «ագնամ ռուսումաթը»։ Պարտքերի վճարման ժամկետը 10-ից ավելացավ 20 տարով։ Ականատեսները վկայում էին, որ հարկերը գանձվել են չտեսնված դաժանությամբ։ Բիթլիսի ռուսական հյուպատոս Շիրկովը, ոչխարի հարկի բարձրացման առիթով Պոլսի դեսպանին գրում էր. «Պետք է ենթադրել, որ «ագնամ ռուսումաթ» հարկի մեծ չափով ավելանալը (որը նրանք առանց այն էլ վճարում են մեծ

---

[3] Նույն տեղում, 27 մարտի։

[4] «Գործ», 26 մարտի 1914։

[5] «Кавказ», 15 апреля 1914.

[6] АВПР, ф. «Посольство в Константинополе», 1914, д. 1406, л. 11 об.—12.

դժկամությամբ), ազգաբնակչության կողմից լուրջ խոչընդոտների կհանդիպի, և ընդհանրապես դժվար թե որևիցե հարկի ավելացում Թուրքերի համար բարեհաջող ավարտվի»[6]։ Իրոք, շուտով Շիրկովը իր հաջորդ հաղորդագրություններից մեկում գրում է. «Նահիեում քրդերը մերժել են հարկահավաքներին վճարել այդ հարկը։ Իսկ Մոդկի ու Խոյուդի շրջանի քրդերը ընդհանրապես դուրս են վռնդել հարկահավաքներին»[7]։ «Մշակը» նույնպես վկայում էր այդ օրերին, «...որ Դիարբեքիրի ու Էրզրումի վիլայեթներում հուզմունք էր տիրում պետական հարկերի ավելացումից»[8]։ «Հորիզոն» թերթի թղթակիցը «Քրդական ապստամբության նախօրյակին» հոդվածում առավել մանրամասն է անդրադառնում երիտթուրքական իշխանության նկատմամբ քրդերի տածած թշնամության, այդ ծնող սոցիալական դրդապատճառներին։ Քրդերը,— գրում էր թերթ,— «պաշտոնյաների վերաբերմամբ արտահայտվում են այսպես. «պաշտոնյաները ինչո՞ւ. սիտի այսքան բարձր ստանան և մենք ի՞նչ կարիք ունենք այսքան ապիկար տաճիկներից կաշառակեր պաշտոնյաներ ունենալու, որոնք իրենց կյանքը զեխության և անպարկեշտության մեջ են անցկացնում, չէ՞ որ նրանք ավելի շափավոր ոռճիկով և համեստ կյանքով կարող էին ապրել, քանի որ քրդերի պես հասարակ մահկանացուներ են։ Եվ ի՞նչ բանի ու նպատակի համար այսքան ավելորդ ծախսեր ու շռայլումներ։ Չէ՞ որ այդքան դրամներ քրդերի քսակից են ելնում։ Այսքան ավելորդ ծախսերի համար է, որ տուրքերը ավելացել են, առաջին ժամանակները մեկ ոչխարի համար $1^1/_2$ ղուրուշ (մոտ 12 կոպեկ) էր վճարվում, իսկ այժմ 8 ղուրուշ է (64 կոպեկ) վճարվում։ Տուրքերի մեծ մասը քրդերից են գանձում և նրանք լինելով անասնապահ, երկրագործ ու խաշնարած ժողովուրդ, ավելի մեծ չափով տնտեսական քայքայման են ենթարկվում»[9]։

Տնտեսության վրա կործանարար էր տղամարդկանց զինվորագրումը։ Հատկապես զայրույթի առիթներ տվեց 1913—1914 թթ. զինակիրների հավաքագրումը։ Աշխատունակ ձեռքի պակասը բազմաթիվ քրդական ընտանիքների քայքայման ուղղակի պատճառը դարձավ։ «Ազատամարտը» այդ օրերին գրում էր. «Հարյուրավոր երիտասարդներ կարձանագրվին ու կերթան, անտեր, անտիրական ձգելով տուն, տեղ, ընտանիք։ Մուհնսիզներու հավաքումը մանավանդ մեծագույն մտահոգության պատճառ է, քանի որ երեսի վրա կմնան բազմաթիվ մանկամարդ կիներ, ենթակա՝ ամեն տեսակ փորձություններու և անշափահաս երեխաներ, որոնք թշվառության պիտի մատնվին։ Եվ արդեն պակաս չեն սրտաճմլիկ տեսարաններ։ Առաջին օր դյուղացի կին մը ծծկեր երեխան գրկած՝ լալով կառավարության դուռը կերթար։

— Գնանք, լաո, գնանք մենք ալ կենդանի մեռնինք... մեր միակ հույսն ու ապավենը տարան, յոթը անտերուներու ապրիլն ինչ արժե...»[10]։

Բիթլիսի շրջանում ստեղծված լարված վիճակը կայծի էր սպասում։ Թեև քուրդ ֆեոդալ-ցեղապետերի կողմից նախապատրաստվում էր լայն ապստամբություն, սակայն իրադարձությունների անսպասելի ընթացքը կանխեց բոլոր ծրագրերը։

Դեռևս Բիթլիսի ապստամբության նախօրյակին, մարտի 10-ին մոլլա Սելիմը Պոլսի առաջնորդարան է ուղարկում մի նամակ, որով հավաստիացնում էր շարժման հակաթուրքական բովանդակության մասին։ Կաթողիկոսին ուղղած իր զեկույցում Պոլսի պատրիարք՝ Զավեն տեր Եղիայանը, վկայում էր. «Հարկ է ավելացնել, թե մոլլա Սելիմը քաղաքի վրա հարձակման միջոցին հատուկ գիր ուղղելով առաջնորդին վստահացուցած է զինքը, թե հայերուն որևէ վնաս չպիտի հասնի, վասն զի հայերուն հետ խնդիր չկա, այլ կառավարության հետ է խնդիրը։ Եվ արդարև, քրդական այդ շարժումը ուղղակի կառավարության դեմ պատրաստված ցույց մ՝ էր, որուն նպատակն էր կարգ մը

7 Նույն տեղում։

8 «Մշակ», 25 մարտի 1914։

9 «Հորիզոն», 27 մարտի 1914։

10 «Ազատամարտ», 25 մայիսի 1914 (11 հունիսի)։

պահանջներ ընդունել տալ կառավարության...»[11]։ Նույնը հաստատում է և Բիթլիսի թեմի առաջնորդ Սուրեն ծ. վ. Դալամճյանը կաթողիկոսին ուղղած իր պաշտոնական զեկուցագրի մեջ։ Նա գրում է. «Ապստամբապետ Մոլլա Սելիմը առաջնորդարանին նամակ մը ուղղելով մեզ կը հայտներ, թե յուրայիններու կողմն մերայնոց որևէ վտանգ չպիտի պատահի և փափագ կհայտնի, որ այդ իմաստով ծանոթացումներ ընենք մեր ժողովրդին»[12]։

Ապստամբության զեկավարի այս նամակը վստահեցնում էր, որ շարժման մասնակիցները ապստամբության ընթացքում հակահայկական տրամադրություններ չեն դրսևորի։

Ինչպե՞ս ընթացավ իրականում ապստամբությունը, ի՞նչ արտահայտություն գտավ ապստամբների վերաբերմունքը դեպի հայերը։ «Մշակ» թերթի խմբագրության հետագայում ստացած նյութերը շուտով հերքեցին այն անհիմն լուրերը, թե իբր շարժումն ուղղված է հայերի դեմ։ Այս հանգամանքը թերթին ստիպեց շարժումը համարել «հանելուկային», իսկ որոշ ժամանակ անց՝ ավելի հանգիստ փորձել ամփոփել փաստերը և հանգամանքները՝ ճիշտ եզրակացությունների համար։ Իսկ ինչպիսի՞ փաստեր ի հայտ եկան։ Մոլլա Սելիմի բնակավայրին՝ Կոմաչին հարևան հայկական Խուլթիկ գյուղի հայ դարբինները ապստամբների համար պատրաստել են մեծ թվով տապարներ։ «Հորիզոնի» ստացած հաղորդագրություններից մեկում նշվում է. «Քրդերը նախապես վստահեցրել էին հայերին, որ նրանց մի մազին էլ չեն դիպչի, իսկ նրանց գույքն ու անձը պաշտպանելու համար նախապես ձեռ էին առել միջոցներ։ Ըստ լուրերի այս հավաստիացումներից ելնելով, հայերից ոմանք միացել էին քրդերին, հիմնականում եղել են գյուղացիներ»[13]։ Եթե հայերի անմիջական մասնակցությունը ապստամբությանը եղել է չնչին, այնուհանդերձ անժխտելի է այն, որ քրդերը ապստամբության ընթացքում չեն դրսևորել հակահայկական տրամադրություններ։

Ի՞նչ էր իրենից ներկայացնում ապստամբ մասսան, ովքե՞ր էին ապստամբները։ Նրանց քանակի մասին, գրում է «Հորիզոնի» թղթակիցը, «կարծիքները ծայրահեղ են։ Համենայնդեպս նվազագույն չափը պետք է ընդունել 5000։ Քուրդ մարտիկների քաջագործության և հերոսությունների մասին ամենն էլ հիացմունքով են խոսում։ Ականատեսների տված վկայությանը նայելով, մի քանի հայտնի քյուրդերի օգնում էին կանայք, որոնք փամփուշտ, կեր ու ջուր էին մատակարարում և զինված էին կանոնավոր զենքերով»[14]։ Մեկ այլ հաղորդագրության մեջ նույն թերթը այսպես է նկարագրում ապստամբներին. «Քաղցած ու բոկոտն մի բազմություն էր, որ ձյունը ճեղքելով շնչակտուր հետևում էր դրոշակակիրներին։ Նրանցից շատերը տկլոր, միայն մի շապիկ ու մեկ աբա հագած, շատերը բոկոտն, տրեխները կռնակին կապած, շատերը դաշույններով և տապարներով զինված, իսկ շատերն էլ բրերով ու սրերով...»[15]։ Հոդվածագիրն այնուհետև ավելացնում է, որ հայերի հետ քուրդ ապստամբները վարվել են չափազանց ընտանեբար և բարյացակամորեն, նույնիսկ հրաժարվել են վերցնել հայերի ինքնակամ առաջարկած հացը, «միայն հայերից վերցրել են փայտ, այն էլ անտարակույս միայն և միայն ծայրահեղ անհրաժեշտությունից թելադրված, որովհետև նրանք 24 ժամ անձրևի և ձյունի տակ են եղել։ Այս հանգամանքը հայերին բավական հանգստացնում է»[16]։

Ապստամբությունը մարեց շատ կարճ ժամանակամիջոցում, մի քանի օրում, թուրքական իշխանությունների կողմից ոչ մեծ ճիգերի գործադրմամբ։ Բիթլիսի ապստամբությունը քրդերի նախորդ տասնյակ անգամներ բարձրացրած ապստամբություններից թերևս ամենակարճն ու քիչ տարածվածն էր։ Թվում

---

11 «Արարատ», 1914, № 4, էջ 326։

12 «Հորիզոն», 20 ապրիլի 1914։

13 Նույն տեղում, 18 մարտի։

14 Նույն տեղում, 12 ապրիլի։

15 Նույն տեղում, 10 ապրիլի։

16 Նույն տեղում։

է, որ նրա ճնշումն էլ կառավարության համար լուրջ հոգս չէր։ Սակայն իրադարձությունները վկայում են, որ երիտթուրքական կառավարությունը ոչ միայն արագությամբ հաշվեհարդար տեսավ ապստամբների հետ, այլև այն օգտագործեց քրդերի դեմ մեծ կամպանիա անցկացնելու համար։ Գործողությունները կրում էին դաժան ու արյունոտ բնույթ։ Ջերբակալվում էին բոլոր նրանք, ովքեր փոքր-ինչ կասկածվում էին ապստամբությանը հարելու մեջ։ Այդ օրերին Շիրկովը գրում էր. «Բիթլիսի բանտը լեփ լեցուն էր, բանտարկյալների վիճակը՝ ինչպես հայերի, նույնպես և մուսուլմանների, անհնար է նկարագրել։ Բիթլիսի բանտը իրենից ներկայացնում է այնպիսի մի տեղ, որ նորմալ մարդը կխենթանա. ...Երեկ, ապրիլի 10-ին մի քրդի բանտից տարան հարցաքննության սենյակ միանգամայն առողջ վիճակում, իսկ այնտեղից դուրս բերեցին արյունոտ գլխով, ամբողջովին ծածկված կրով... Բանտում մահացած մեկ այլ գերի ընկած վիրավոր քրդի զապտիները քացիներով ու հրացանների կոթերով այնքան էին ծեծել, որ դիակը անճանաչելի էր դարձել»[17]։ Ռազմական դատարանները անընդմեջ մահվան վճիռներ էին կայացնում։ Բանտային դաժանությունների դեմ ապրիլի վերջին Բիթլիսում բողոքի ցույց են կազմակերպում քուրդ բանտարկյալների կանայք, թվով շուրջ 300 հոգի[18]։ Քաղաքում կախաղան են բարձրացվում ապստամբության ղեկավարները։ Նրանց վզներին կախված տախտակներին գրված էր. «Նա ռազմական դատարանի կողմից դատապարտված է մահապատժի այն բանի համար, որ համարձակվել է ազգաբնակչության մի մասին քարոզել զենքի դիմել կառավարության դեմ»[19]։ Զինվորների դաժանություններից խուսափելու համար ազգաբնակչությունը մասսայաբար թողնում էր գյուղերը և հեռանում սարերը։ «Հորիզոնում» կարդում ենք. «Զորքը Նահիե գավառակի գրեթե բոլոր քուրդ գյուղերը դատարկ է գտել։ Քրդերը իրենց կանանց, զավակներին ու գույքից ու անասուններից ինչ որ կարողացել էին հանձնել էին հայերին և հեռացել, ո՞ւր, ի՞նչ ճանապարհով, դեռ հայտնի չէ»[20]։

Ապստամբությունը ճնշելու դաժան միջոցները և դրանց չափերը աննախընթաց էին։ Քրդական հարցը իր կարևորությամբ դառնում է կառավարության քննության նյութ։ Մարտի 22-ին (4/IV) այն մտցվում է «Միություն և առաջադիմություն» կոմիտեի արտահերթ նիստում քննարկման։ Թալիաթ-բեյի կողմից առաջադրվող բոլոր կտրուկ և դաժան միջոցառումները կոմիտեի նիստում արժանանում են հավանության։ Մեծ վեզիրը իր հերթին բողոք է ներկայացնում Ռուսաստանին՝ նրան մեղադրելով ապստամբությունը հրահրելու մեջ։ Միաժամանակ պահանջ է ներկայացվում թուրքական իշխանություններին հանձնել Բիթլիսի ռուսական հյուպատոսությունում պատսպարված մոլլա Սելիմին և նրա համախոհներին։ Պոլսի ռուսական դեսպան Գիրսը մերժում է մեծ վեզիրի պահանջը, հայտարարելով, որ ապստամբությունը ունեցել է քաղաքական բնույթ, հետևաբար ապստամբները լրիվ իրավունք են ունեցել օգտվելու օտար պետության կոնսուլատի հովանավորությունից[21]։

Աննախընթաց էին ապստամբների նկատմամբ կիրառած պատժաչափերը և դրանց իրականացման դաժանությունը։ Դա բացատրվում էր միայն ու միայն շարժման բնույթով։ Եթե շարժումը, իրավ, փոքր-ինչ չափով ուղղվեր դեպի հայերը, ապա թուրքական իշխանությունները դժվար թե խանգարեին դրան, իսկ ապստամբների նկատմամբ հանդես կբերեին մեծ զիջողություն, ինչպես այդ արվել էր նախկիններում և ոչ մեկն էլ կախաղան չէր բարձրացվել։ Շիրկովը ճիշտ էր, երբ գրում էր. «...եթե քրդերը ներկա իրադարձություններում շրջվեին հայերի դեմ, որին հավանաբար անհամբերությամբ սպասում էր թուրքական կառավարությունը և կազմակերպվեր նրանց ջարդը, ապա կարելի է

---

17 АВПР, ф. «Посольство в Константинополе», 1914, д. 1406, лл. 43—44.

18 «Արև», 30 ապրիլի 1914։

19 АВПР, ф. «Посольство в Константинополе», 1914, д. 1406, л. 58.

20 «Հորիզոն», 25 ապրիլի 1914։

21 Международные отношения в эпоху империализма, серия III, т. II, с. 299.

հավատացած լինել, որ առաջիններից ոչ մեկը կախաղան չէր հանվի»[22]։ Այս միտքը հաստատում են հենց իրենք՝ թուրքերը։ Վանի վալին՝ Թահսին բեյը, Բեկզուլյանցի հետ զրուցելիս ասում է, որ քրդերի հետ այդչափ դաժան վարվեցին, քանի որ նրանք հարևան երկրի հետ բարեկամական կապ ունեին և ավելորդ երդվանքներ էին տածում[23]։

Չնայած ապստամբության նպատակի հստակությանը, նրա բնույթի որոշակիությանը, եվրոպական և ասիական երկրների թերթերը, ելնելով Թուրքիայում իրենց պետությունների հետապնդած շահերից, ապստամբությանը տվեցին տարբեր գնահատականներ։ Անգլիական, ֆրանսիական թերթերը պնդում էին, որ ապստամբությունն ուղղված էր հայկական բարենորոգումները վիժեցնելուն։ Ռուսական թերթերը երկու տեսակետ էին առաջ քաշում. մի մասը գտնում էր, որ այն ուղղված էր բարենորոգումների դեմ, հետևաբար հրահրել են թուրքական իշխանությունները, իսկ մյուս մասը ապստամբությունը բացատրում էր քրդական շարժման մեջ ազգային գիտակցության զարթոնքով։ Քրդական ապստամբության գնահատականում առավել հետևողական և միասնական էին թուրքական ու գերմանական թերթերը, որոնք դրանում տեսնում էին Ռուսաստանի միջամտությունը։

Բիթլիսի ապստամբությունը ավելի հանգամանալից վերլուծության է ենթարկվել հայկական մամուլում։ «Մշակը», «Արևը», «Հորիզոնը», «Բյուզանդիոնը», «Ազատամարտը» այդ օրերին ծավալուն հոդվածներ էին հրապարակում՝ նվիրված քրդական շարժմանը։

Հայ հասարակական գործիչ Նավասարդյանը «Մշակի» խմբագրությանն ուղղված իր հոդվածը վերնագրել էր՝ «Քյուրդական ապստամբություն թե՞ հայկական ջարդերի նախօրյակ»։ Վերնագիրն արտահայտում էր այդ օրերին հայկական հասարակայնությանը հուզող հարցը, որը և սպասում էր իր պատասխանին։ Բիթլիսի իրադարձությունները ուշադիր քննելուց հետո հոդվածագիրը իր առաջ քաշած հարցին պատասխանում էր. «Երիտասարդ թուրքերը չեն, որ ղրդում են քյուրդերին դեպի շարժումն։ Ուստի քյուրդերի շարժումն ևս պետք է նկատվի ոչ որպես հետադիմական շարժումն, կամ դեմ բարենորոգումների գործադրության, այլ իբրև ապստամբություն». «...որքան մեղ ծանոթ է մեր անձնական ու անմիջական ծանոթությունից, մեր տասնյակ տարիներ առաջարած ճանապարհորդություններից,— շարունակում էր հեղինակը,— քրդերը երբեք բարի աչքով չեն նայել թուրքերին, չնայելով իրենց իսլամությանը»։ Նավասարդյանը հաստատում է, որ քրդական շարժման մեջ արդեն հանդես են գալիս նոր ուժեր. «...կան քրդերի մեջ բավականաչափ խավեր,— գրում է նա,— որոնց մեջ արթնացել է ցեղական ինքնաճանաչողությունը և նրանք կկամենային մտնել համամարդկային ընդհանուր քաղաքակրթական շավիղի մեջ։ Ես ավելացնեմ, որ հայերի... ստացած բարենորոգումները նրանք՝ քյուրդերը, համարում են մի բարիք, որ հայերի երկարամյա ջանքերով և արյան գնովն են ստացվել»[24]։ Չնայած այս բարյացակամ տրամադրվածությանը, հոդվածագիրը ճիշտ էր նկատել, որ այս կարծիքն են արտահայտել ոչ բոլոր քրդերը՝ թերևս քրդական մտավորականությունը և ժողովրդական խավերի ներկայացուցիչները միայն։ Մինչդեռ այլ է եղել ֆեոդալական, կրոնական վերնախավի մեծ մասի մոտեցումը հայկական հարցին։ Ամփոփելով իր ծավալուն հոդվածը, Նավասարդյանը գրում էր. «Քրդերի շարժումը ապստամբություն է Երիտասարդ թուրքերի դեմ և ոչ թե ուղղված բարենորոգումների դեմ, կամ հարուցանելու հայկական ջարդեր»[25]։

---

22 АВПР, ф. «Посольство в Константинополе», 1914, д. 1406, лл. 50, 51; см. также: М. С. Лазарев. Курдский вопрос. М., 1972, с. 216.

23 Р. Бекгулянц. По Турецкой Армении. Впечатление о поездке летом 1914 г. Ростов-на-Дону, 1914, с. 76.

24 «Մշակ», 12 ապրիլի 1914։

25 Նույն աղբյուրում։

Նավասարդյանի այս հոդվածից հինգ օր անց «Մշակը» իր մի քանի համարներում հրապարակում է թերթի խմբագրի՝ Հ. Առաքելյանի հոդվածը «Քուրդիստանի գաղափարը» վերտառությամբ։ «Հետզհետե պարզվում են քյուրդական շարժման հանգամանքները,— գրում է նա։—Մինչև այժմ ստացված կըցկրտուր, խառնաշփոթ և հաճախ իրար հակասական լուրերից կարելի է գալ այն եզրակացության, որ ներկա քյուրդական շարժումը քաղաքական բնավորություն է կրում և նրա շարժառիթը գլխավորապես ոչ թե ալան-թալանն է, ոչ թե կրոնական մոլեռանդությունն է, ոչ թե խաղաղ ժողովրդի աշխատանքի պտուղը կորզելու տենչն է, ինչպես եղել է մինչև այժմ, այլ քյուրդական ցեղ կամ ազգություն, նույնիսկ քյուրդական ինքնավարական մարմին կազմելու ձգտում է...»[26]։ Հեղինակը ճիշտ էր նկատում, որ քրդերի սոցիալ-տնտեսական կացությունը դեռևս պայմաններ չի ստեղծում զարթոնքի հարաճուն վերելքի համար, որ այն խոչընդոտ է այդ ճանապարհին։ Անդրադառնալով քրդերի շարժումներին և դրանց նկատմամբ իրենց ունենալիք վերաբերմունքին, Հ. Առաքելյանը գրում էր. «...այժմ ապստամբական փորձեր անելով և իրավունքների պահանջ դնելով, դրանով կողմնակի կերպով քրդերը անդամալուծում են ռեֆորմների գործադրությունը հայկական վիլայեթների և Տրապիզոնի վիլայեթի մեջ»։ Խմբագրի հետևությունը այն էր, որ պետք է չպաշտպանել քրդերին նրանց պայքարում։ Քանի որ թուրքական իշխանությունները այդ կարող են օգտագործել բարենորոգումների հարցը նորից հետաձգելու համար։

«Մշակի» էջերում այդ օրերին մեկ այլ ծավալուն հոդվածով հանդես է գալիս ոմն Ա. Մուրադյան (Սամսարդանից)։ Նրա հոդվածը վերնագրված էր՝ «Քրդական շարժումը և հայկական բարենորոգումները»։ Այստեղ նա ջանք չի խնայում ընթերցողներին համոզելու, որ քրդական շարժումը թելադրված է երիտթուրքերի կողմից և ուղղված է հայկական բարենորոգումների դեմ[27]։ Առաքելյանի և Մուրադյանի հոդվածներից հետո «Մշակի» էջերում նորից հանդես է գալիս Նավասարդյանը՝ «Քրդական ապստամբության շարժառիթը և նպատակը» հոդվածով։ Զգացվում է, որ այս հոդվածը նա գրել է հատկապես Հ. Առաքելյանի հոդվածում առաջ քաշած այն խնդրի կապակցությամբ, ուր հարց է տրվում, թե հայ հասարակայնությունը ի՞նչ վերաբերմունք պետք է ունենա քրդական շարժումների նկատմամբ։ Այստեղ նա ևս, ինչպես և Առաքելյանը, գտնում է, որ ամեն մի քաղաքական նոր իրադարձություն Թուրքիայում կարող է բարդություն առաջ բերել հայկական ռեֆորմների իրականացման ճանապարհին։ Սակայն կրկին անդրադառնալով Բիթլիսի ապստամբությանը, նա պնդում էր, որ նրա բուն նպատակը եղել է ոչ թե քրդական ինքնավարություն ստեղծելը, այլ, իր խոսքերով ասած՝ «կյանքի բարելավումը»։

Հոդվածագրի այս գնահատականը բաժանելով հանդերձ չպետք է անտեսել և այն, որ ապստամբությանը մասնակից ֆեոդալական ու կրոնական վերնախավը հակաթուրքական տրամադրությունների ետևում հետամուտ էր իր սոցիալական, դասակարգային շահերին։

Եթե ի մի բերենք «Մշակ», «Բյուզանդիոն», «Հորիզոն», «Արև» հայկական թերթերի էջերում տպված ընդհանրացնող հոդվածները, ապստամբության բնույթին ու շարժառիթներին տրված գնահատականը, կտեսնենք, որ դրանցում մերժվում է ապստամբության՝ հայկական բարենորոգումների դեմ ուղղված լինելու տեսակետը։

Հայկական մամուլի էջերում քրդական հարցի լայնորեն լուսաբանումը վկայում է այն մեծ հետաքրքրության մասին, որ այդ ժամանակ դրսևորել է հայ հասարակական միտքը դրացի քուրդ ժողովրդի ազգային շարժումների նկատմամբ։ Թերթերի պարունակած նյութը վկայում է, որ դրանց լուսաբանման ժամանակ չի եղել միակողմանի մոտեցում։ Թերթերը իրենց էջերը տրամադրել են իրարամերժ, հակասական կարծիքներ պարունակող հոդվածների,

---

26 Նույն տեղում, 17 ապրիլի.

27 Նույն տեղում, 19 ապրիլի։

հանույթով են տպագրել այն փաստերը, որոնք վկայել են երկու ժողովուրդների բարեկամական հարաբերությունների մասին։

Հայկական մամուլը կարևոր և լուրջ աղբյուր է քուրդ ժողովրդի պատմության, տնտեսության և մշակույթի ուսումնասիրության համար։ Նրանում տեղ են գտել ոչ միայն հայ հեղինակների թղթակցությունները, այլև մեկնաբանվել են աշխարհի տարբեր լեզուներով հրատարակվող թերթերում քրդերին նվիրված հոդվածներն ու հաղորդագրությունները։

КУРДСКОЕ ВОССТАНИЕ 1914 г. В БИТЛИСЕ В ОЦЕНКЕ АРМЯНСКОЙ ПРЕССЫ

Джалиле ДЖАЛИЛ

Резюме

Восстание курдов в Битлисе в 1914 году привлекло внимание мировой прессы того времени. Английские, немецкие, русские, турецкие и армянские газеты комментировали его весьма противоречиво. Пропагандистская шумиха вокруг курдского выступления была вызвана сложной и напряженной политической ситуацией, сложившейся на Ближнем Востоке накануне первой мировой войны. Противоборство между дипломатическими кругами заинтересованных европейских стран в Турции порождало кривотолки и тенденциозное освещение причин и хода восстания. О восстании в Битлисе подробно писала и живо его комментировала армянская периодическая печать. Интерес армянской периодики к событиям в Битлисе в частности и к курдскому движению в целом определялся общими политическими, социальными и экономическими интересами этих двух народов. Анализ обширного материала армянских газет и журналов позволяет восстановить ход восстания и дать правильную оценку причин и характера событий.